ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի փետրվարի 28-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12.01.2023, N 4 (7895)) **վիճակագրության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Մամիկոնի Քթոյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողները նշեցին. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2023 թվականի հունվարի 12-ի N 4 (7895) համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար**, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2023 թվականի հունվարի 10-ին ռեկտորին դիմում է ներկայացրել վիճակագրության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Արմեն Մամիկոնի Քթոյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը նշեց. Ա.Մ.Քթոյանը ծնվել է 1978 թվականի սեպտեմբերի 5-ին Հրազդան քաղաքում: 1995 թվականին նա ավարտել է Հրազդանի Հ.Օրբելու անվան N 13 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել

է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ ((ԵՊՏԻ), ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) և 2000 թվականին գերազանցության դիպլոմով ավարտել է ինժեներատնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը «Մաթեմատիկական մեթոդներ և գործառնությունների հետազոտություն էկոնոմիկայում» մասնագիտությամբ. նրան շնորհվել է տնտեսագետ-մաթեմատիկոսի որակավորում: 2000-2003 թթ. նա սովորել է ՀՀ կառավարությանն առընթեր կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտի ասպիրանտուրայում՝ «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ:

2003 թվականին Ա.Մ.Քթոյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2011 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Ա.Մ.Քթոյանը ունի տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 25 է (1 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 5 հետազոտական աշխատանք՝ համահեղինակությամբ, 19 գիտական հոդված, որից 4-ը՝ միջազգային գիտական ամսագրերում):

Աշխատանքային գործունեությունը: 2003-2007 թթ. Ա.Մ.Քթոյանը աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտում. նախ՝ գլխավոր մասնագետ, այնուհետև՝ բաժնի վարիչ: 01.09.2007 - 01.04.2016 նա աշխատել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում. նախ՝ ասիստենտ, այնուհետև՝ դոցենտ, 10.02.2015 - 01.07.2015 և 01.09.2015 - 30.03.2016՝ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում որպես դոցենտ՝ համատեղությամբ: 2016 թվականի ապրիլի 1-ից առ այսօր Ա.Մ.Քթոյանը աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. 01.04.2016 - 15.09.2016՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում որպես «Սոցիալ-տնտեսական զարգացման հետազոտություններ» ծրագրի տնօրեն, 15.09.2016 - 05.05.2017.՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում որպես «Կրթական գործընթացի և տեխնոլոգիաների հետազոտություններ» ծրագրի ավագ հետազոտող-ծրագրի համակարգող, 05.05.2017 - 05.03.2018՝ վիճակագրության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ 2018 թվականի մարտի 5-ից՝ վիճակագրության ամբիոնի վարիչ՝ մրցույթով ընտրվելու կապակցությամբ: 2022 թվականի մայիսից Ա.Մ.Քթոյանը «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ ՈՒՎԿ» ՓԲԸ (2022 թվականի նոյեմբերի 9-ից՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ) խորհրդի անդամ է:

Ամուսնացած է, ունի 2 որդի և մեկ դուստր:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը նշեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի 2023 թվականի

փետրվարի 17-ի նիստում (արձանագրություն N 9) քննարկվել է վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ա.Մ.Քթոյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Ա.Մ.Քթոյանը ներկայացրել է վիճակագրության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել ամբիոնի դոցենտներ Մ.Է.Մովսիսյանը, Բ.Վ.Մարտիրոսյանը, դասախոս Ռ.Վ.Առաքելյանը: Նրանք նշել են, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը համապատասխանում է ամբիոնի վարիչի պաշտոնին ներկայացվող պահանջներին և առաջարկել են երաշխավորել նրան մասնակցելու գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկությանը չի մասնակցել Ա.Մ.Քթոյանը) վիճակագրության ամբիոնի կողմից Ա.Մ.Քթոյանի մասնագիտական բնութագիրը և գիտամանկավարժական գործունեությունը գնահատվել է դրական, որոշվել է, որ նա համապատասխանում է ամբիոնի վարիչի պաշտոնին և երաշխավորել են նրա թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 22-ի նիստում (արձանագրություն N 13), որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Մամիկոնի Քթոյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Պրոֆեսոր

Ա.Հ.Սարգսյանը գիտական խորհրդի անդամներին հորդորեց հաշվի առնել ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի որոշումները:

Զեկուցողներից հետո Արմեն Մամիկոնի Քթոյանը ներկայացրեց վիճակագրության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Կ.Պ.Պետրոսյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Մամիկոնի Քթոյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 52-ը. կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 35-րդ կետը, վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 3 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 41, դեմ՝ 10, անվավեր քվեաթերթիկ՝ 1**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Մամիկոնի Քթոյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան